

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Քարյոս Անթարամեան

cantaramian@gmail.com

Ծնած է 1972ին, Մեքսիքո: 2006ին պաշտպանած է դոկտորական ասպրանճա՝ ընկերային մարդաբանության մեջ: 2014ին դասախոս է Մեքսիքոյի Centro de Investigaciones y Estudios Superiores en Antropología Social (CIESAS) մեջ: 2016ին մշակութային կցորդն է Մեքսիքոյի մեջ ՀՀ դեսպանության: Մամուլի տակ է իր *The Spirit of Martyrdom in April 24th Commemorations* հատորը:

Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ Մեքսիքոյի հայութիւնը, Հայոց Յեղասպանութիւնը եւ անոր հետքերը յետնորդ սերունդներուն վրայ, գաղթը եւ անդրսահմանային հաւաքականութիւնները, հայկական սփիւթը եւ Յեղասպանության յուշակատարումները:

Տ. Ներսէս Քինյ. Ասրեան

monk-deacon@mail.ru

Ծնած է 1980ին, Շուշի, Արցախ: 2006ին ասպրանճ է Ս. Էջմիածնի Գեորգեան Հոգեւոր Ճեմարանը: 2009-2016 եղած է Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի N զորամասի գնդերէջ: 2009էն տնօրէն է Հայ Առաքելական Եկեղեցիի Արցախի թեմի Տեղեկատուական համակարգին: 2016էն հոգեւոր հովիւն է Ստեփանակերտի Աստուածամօր Ս. Յովան մայր եկեղեցիին եւ ծխակատար քահանան՝ Ասկերանի Ս. Աստուածածին եկեղեցիին:

Ունի բազմաթիւ ուսուցանասիրական յօդուածներ եւ հրապարակումներ: Գիտաուսումնասիրական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ Ի.-ԻԱ. դարերու Հայ Եկեղեցոյ պատմութիւնը, արցախեան հիմնախնդիրը, Աստուածաբանութիւն, Հայ Եկեղեցոյ տօներ եւ ծէսեր, աղանդներ: Ներկայիս կը բնակի Շուշի:

Կարինէ Աւետեան

avetyan.karine1@gmail.com

Ծնած է 1952ին, Արտաշատ: 1975ին ասպրանճ է Երեւանի Պետական Համալսարանի Պատմության Ֆակուլտէտը: 1982ին ասպրանճ է Ինստիտուտին թեկնածուական բաժինը եւ 2015ին պաշտպանած է թեկնածուականը: 1975էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության Ինստիտուտի Կովկասագիտության եւ Բիւզանդագիտության Բաժնին մէջ: Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածներու, որոնցմէ ոմանք լոյս տեսած են յօդուածներու ժողովածուներու հատորներու մէջ:

Հրատարակած է Ս. Պետերբուրգի *Քրիստոնեայ Արեւելք* (ոտաերէն), Փարիզի *Բանասէր*, Էջմիածնի *Արարապ* հանդէսներու, Տրդատ Եպս. Պալեանի գործերու մատենագիտութիւնները: 2008ին հրատարակած է *Տրդապ*

Եպս. Պալեանի «Հայ Վանորայք Ի Թուրքիա» աշխատութիւնը: Կը բնակի Երեւան:

Լիանա Աւետիսեան

lian19921992@mail.ru

Ծնած է 1992ին, Մաստարա, Արագածոտն: 2015ին աւարտած է ԵՊՀ Միջազգային Յարաբերութիւններու մագիստրականը: Հեղինակ է շարք մը ուսումնասիրական յօդուածներու:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ազգագրութիւնը, բանահիւսութիւն-կրօնք յարաբերակցութիւնը, հայ սրբատեղիները:

Քնարիկ Աւետիսեան

knarik_avetisyan@hotmail.com

Ծնած է 1951ին, Վայք: 2006ին ՀՀ ԳԱԱի մէջ պաշտպանած է թեկնածուական աւարտաճառ՝ արուեստաբանութեան գծով: 1987-2018՝ իբրեւ աւագ գիտաշխատող պաշտօնավարած է Հայաստանի Ազգային Պատկերասրահի Հայ Գեղանկարի Բաժնին մէջ: Ներկայիս դասախօս է արուեստի պատմութեան եւ տեսութեան: 1990էն անդամ է ՀՀ Նկարիչներու Միութեան:

Համահեղինակ է նկարագիրքերու եւ ուսումնասիրութիւններու: 2015ին լոյս ընծայած է *Աստուածածնի Պատկերագրութիւնը Հայ Միջնադարեան Արուեստում* մենագրութիւնը: Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ միջնադարեան եւ ժամանակակից արուեստի պատմութիւնը եւ տեսութիւնը:

Աննա Բաբայեան

annababayan646226@gmail.com

Ծնած է Երեւան, 1992ին: 2015ին աւարտած է ԵՊՀ Բանասիրական Բաժնի մագիստրականը: 2016էն կը պաշտօնավարէ ԵՊՀ Ռազմավարական Հետազոտութիւնների Կեդրոնին մէջ իբրեւ յօդուածագիր-ակնարկագիր:

Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Գանձակի պատմութիւնը եւ տեղի հայ բնակչութիւնը, Մուսա Լեռան հերոսամարտը, մայիսյան հերոսամարտեր, արցախեան շարժումը, Լեռ Կամսարի թերթօնները, հայոց ազգագրութիւնը եւ գորգարուեստը:

Արծուի Բախչինեան

artsvi@yahoo.com

Ծնած է 1971ին, Երեւան: 1996ին թեկնածուական պաշտպանած է ՀՀ ԳԱԱ Գրականութեան Ինստիտուտին մէջ: Որպէս գիտաշխատող կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Հայ Գաղթավայրերի եւ Սփիւռքի Բաժնին մէջ: Հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրական հատորներու, յօդուածներու, թարգմանութիւններու, որոնց վերջինը՝ *Հայ Կինո – 100* հայերէն, անգլերէն, ռուսերէն հատորն է (2012):

Բախչինեանի գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ սփիւռքահայ համայնքներու պատմութիւնն ու պատմամշակու-

թային առնչությունները, հայ շարժանկարի, պարարուեստի պատմությունը, նոր շրջանի պատմաբանասիրական նիւթերը, երեւելի հայազգիներ, հայ լուսանկարչական արուեստը....:

Խորէն Գրիգորեան

khorenbask86@gmail.com

Ծնած է 1986ին, Միսիան: 2012ին աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան ու Ազգագրութեան Բաժնի մագիստրականը: 2013էն թեկնածուականի հայցորդ է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկին մէջ: Ներկայիս կրտսեր գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Հայ Ազգագրութեան Ինստիտուտին մէջ, ինչպէս նաեւ ՀՀ մշակոյթի նախարարութեան Պատմամշակութային Արգելոց-Թանգարաններու եւ Պատմական Միջավայրի Պահպանութեան Ծառայութիւն Հիմնարկին մէջ:

Հեղինակ է շարք մը ուսումնասիրական յօդաւածներու, որոնցմէ ոմանք տեղ գտած են իբրեւ յօդաւածներու ժողովածու լոյս տեսած հատորներու մէջ: Ուսումնագիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Սփիւքի տարբեր համայնքներու ինքնութեան, յիշողութեան, ազգային կեանքի կազմակերպման խնդիրները:

Գագիկ Դանիէլեան

gagidaniel@gmail.com

Ծնած է 1988ին, Հրազդան: Այժմ կը բնակի Հրազդան: 2015ին պաշտպանած է թեկնածուական աւարտաճար ՀՀ ԳԱԱի Արեւելագիտութեան Հիմնարկին մէջ: 2016էն Մատենադարանի Արաքատառ Ձեռագրերու Նկարագրութեան եւ Ուսումնասիրման Բաժնի աւագ գիտաշխատող է: 2018 Մարտին ՀՀ արտաքին գործերու նախարարութեան Աշխատակազմի քարտուղարութեան, գլխաւոր մասնագէտ է:

Հեղինակ է շարք մը գիտական յօդաւածներու եւ՝ *Կիլիկեան Հայաստանը Սահմանակից Պեղական Միատրների Ընկալումներում (Պարմաբանասիրական Ակնարկներ)* մենագրութեան (2016): Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ. հայ-արաբական առնչութիւններ, Կիլիկեան Հայաստանի պատմութիւն, Կիլիկեան Հայաստանի յարաբերութիւնները Եգիպտոսի ու Ասորիքի Մեմլութեան Սուլթանութեան, Մոնղոլական Իլխանութեան եւ Իկոնիայի Սելճուքեան Սուլթանութեան հետ:

Ռութէն Եգանեան

rubenyeg@mail.ru

Ծնած է Երեւան, 1950ին: 1987ին պաշտպանած է թեկնածուական աւարտաճառ՝ ԽՍՀՄ ԳԱ Մոսկուայի Ընկերաբանական Հետազոտութիւններու Հիմնարկին մէջ: 2004էն կը գլխաւորէ Հայկական Սոցիալ-Ժողովրդագրական Նախաձեռնութիւն հասարակական կազմակերպութիւնը: Ներկայիս դասախօս է Երեւան Հայ-ռուսական (սլաւոնական) Համալսարանին մէջ: Գիտաուսումնասիրական իր հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ժողովրդագրութիւնը, գաղթականութիւնը, ընկերաբանութիւնը:

Վանո Եղիազարեան

vano.exiazaryan@mail.ru

Ծնած է 1971ին, Լոռիի Մարզի Լեռնապատ գիւղը: 2007ին պաշտպանած է հայրենիներու նիւթով դոկտորական՝ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի անուան Գրականութեան Հիմնարկին մէջ: 2012էն անդամ է Հայաստանի Գրողներու Միութեան: Ներկայիս իբրեւ փրոֆեսոր կը դասախօսէ Վանաձորի Պետական Համալսարանի Գրականութեան Ամբիոնին մէջ: Խմբագրած է շարք մը երկեր: Աշխատասիրած, գրաքարէ թարգմանած եւ հրատարակած է հայ մատենագիրներու երկերը: Հեղինակ է բազմաթիւ մենագրութիւններու, որոնց վերջինն է՝ *Արդի Գրականութիւն եւ Գրականագիտութիւն, Գիրք Ա* (2017): Գիտաուսումնասիրական իր հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ նախամաշտոցեան հայ գիր-գրականութիւնը, հայ հին եւ միջնադարեան գրականութեան պատմութեան եւ տեսութեան հարցեր, բանագիտութեան հարցեր՝ ժողովրդական հաւատալիքներ, առասպելաբանութիւն եւ դիւցազնավէպ, գրականութեան դասաւանդման մեթոդիկա, արդի հայ գրականութիւն են.:

Արմենակ Եղիայեան

armenag@gmail.com

Ծնած է 1939ին, Պուրճ Համուտ, Լիբանան: 1964ին աւարտած է Սէն ժոզէֆ Համալսարանի Ֆրանսական Գրականութեան եւ Լեզուի Բաժինը՝ Ecole des Lettres, իսկ 1970ին՝ Ատամնաբուժութեան Բաժինը:

Խմբագրած եւ թարգմանած է բազմաթիւ հատորներ, կատարած է արեւելահայերէնէ արեւմտահայերէնի փոխադրումներ: Հեղինակ է *Մետրոպեան Տառերու Ակունքները* (2005) մենագրութեան եւ նախակրթարանի *Ծիածան* դասագիրքերու (5 հատոր ընթերցարան, 5 հատոր քերականութիւն, 10 հատոր ուղեցոյց) (1991-95):

Անտիպ է իր «Արեւմտահայերէնի Ուղղագրական, Ուղղախօսական, Ոճաբանական Ուղեցոյց» աշխատութիւնը: Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայոց լեզուի կառոյցն ու շարահիւստութիւնը:

Պետրոս Թորոսեան

Bedros_torosian@outlook.com

Ծնած է Պէյրութ, 1994ին: 2017ին աւարտած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Պատմութեան Բաժինը: Ներկայիս իր մագիստրական ուսումը կը շարունակէ պատմութեան մէջ նոյն համալսարանէն ներս: Մասնակցած է Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի կազմակերպած գիտաժողովներու:

Ունի հայագիտական ուսումնասիրութիւններ, որոնք լոյս տեսած են *Հայկազեան Հայագիտական Հանդէսին* մէջ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը ԺԹ. դարու Օսմանեան Կայսրութեան պատմութիւնն է, կրթական համակարգը, որբախնամ գործունէութիւնը, ուսանողական-երիտասարդական շարժումները:

Յարութ Կիլիզեան

haroutguluzian299@gmail.com

Ծնած է 1997ին, Պուրճ Համուտ, Լիբանան: 2016ին աւարտած է ՀԲԸՄ Դարուի Յովակիմեան երկրորդական վարժարանը: Նոյն թուականէն սկսած է յաճախել Հայկազեան Համալսարան, ուր կը հետեւի հայագիտական ճիւղին: 2017էն կը պաշտօնավարէ *Ջարթօնք* օրաթերթին մէջ՝ իբրեւ ընդհանուր սրբագրիչ:

Գիտաուսումնական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ գրականութիւնը, մանաւանդ սփիւռքահայ բանաստեղծութիւնը:

Ջաւէն Կենազեան

zavenkniasian@yahoo.com.ar

Ծնած է 1959ին, Պուենոս Այրէս: Խորիմեան Կրթական Հիմնարկութեան շրջնաւարտ է: Հետեւած է Պուենոս Այրէսի Պետական Համալսարանի ճարտարագիտութեան դասընթացքներու: 1992էն հայ մշակոյթ կը դասաւանդէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատութեան մէջ: Արժանթինի Երաժշտագիտութեան Ընկերակցութեան անդամ է:

Հրատարակած է բազմաթիւ գիտական ու հանրամատչելի յօդուածներ հայերէն ու սպաներէն լեզուներով: Վերջին հրատարակած գործընկէն է *La Historia Armenia a Través de un Traje* (Հայոց պատմութիւնը տարագի մը ընդմէջէն, 2018): Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայկական նուագարանները, դրօշակներն ու զինանշանները, պարագիտութիւնն ու ազգագրութիւնը, պատմաբանասիրական խնդիրներ:

Վաչէ Ղազարեան

vatcheg@gmail.com

Ծնած է 1954ին, Հալէպ: Ներկայիս կը բնակի Մոնթրէլ, Քալիֆորնիա: 1983ին պաշտպանած է թեկնածուական աւարտաճառը ԵՊՀ Բանասիրական Բաժանմունքին մէջ: 2002էն կը պաշտօնավարէ իբրեւ ակադեմական մասնագէտ, փրոֆեսորի աստիճանով, օտար լեզուներու հիմնարկի մէջ:

Խմբագրած եւ հրատարակութեան պատրաստած է բազմաթիւ անտիպ ուսումնասիրութիւններ, յուշեր, կատարած է թարգմանութիւններ: Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածներու եւ մենագրութիւններու, որոնց վերջինն է *Ազգային Պարուիրակութեան Գործունէութիւնը 1915–1916* (2017) հատորը: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ազգային պատմութիւնն ու գրականութիւնը, ի մասնաւորի Յակոբ Օշականը, Վահան Թէքէեանը, Արմենական Կուսակցութիւնը, հայ կուսակցութեանց ծրագրականութիւնները, Պօղոս Նուպարի գործունէութիւնը, արեւմտահայութիւնը Օսմանեան Կայսրութեան մէջ, Բաբկէն Կիլիսեանի աթոռակից կաթողիկոսի կենսագործունէութիւնը:

Վարդան Մատթէոսեան

varny1@yahoo.com

Ծնած է 1964ին, Մոնթէվիտօ: Ներկայիս կը բնակի Նիւ Ճըրզի: 2005ին պաշտպանած է թեկնածուական աւարտաճառ՝ ՀՀ ԳԱԱ Պատմութեան

ինստիտուտին մէջ: 2010էն կը վարէ Նիւ Եորքի Ազգ. Ուսումնական Խորհուրդի տնօրէնութիւնը:

Հրատարակած է հինգ հայերէն հատորներ, բազմաթիւ գիտական յօդածներ ու թարգմանութիւններ, խմբագրած ու թարգմանած է բազմաթիւ հատորներ՝ հայերէն, սպաներէն ու անգլերէն: Վերջին տպուած հատորն է *Pasado sin Retorno, Futuro que Espera: Los Armenios en la Argentina, Ayer y Hoy* (Անվերադարձ անցեալ, սպասող ապագայ. հայերը Արժանթինի մէջ՝ երէկ եւ այսօր), 2011ին: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Սփիւռքը, հայոց հնագոյն եւ նոր պատմութիւնը, հայ նոր եւ նորագոյն գրականութիւնը, պատմա-բանասիրական խնդիրներ:

Թեմինէ Մարտոյեան

tehminemartoyan@gmail.com

Ծնած է Երեւան, 1977ին: 2007ին թեկնածուականը պաշտպանած է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Հիմնարկի Իրանագիտութեան Բաժինին մէջ: 2012էն դասախօս է Աւետիք Մկրտչեանի Անուան Տնտեսաիրաւագիտական Համալսարանին մէջ: 2015 Յունուարէն նախագահն է Լազարեան Ինստիտուտ Գիտակրթական Հասարակական Կազմակերպութեան:

Ունի թարգմանութիւններ եւ շարք մը գիտական յօդածներ: Հեղինակն է *Կարմէլեանների Տարեգրութիւնը՝ Որպէս Իրանի 17-18րդ Դարերի Պաշտօնագիրական Աղբիւր* (2011) գիրքին:

Կարէն Մկրտչեան

K86Mkrtchyan@gmail.com

Ծնած է 1986ին, Երեւան: 2014ին պաշտպանած է թեկնածուականը ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտին մէջ: 2012էն կը պաշտօնավարէ ՀՀ Սփիւռքի Նախարարութեան մէջ, որպէս համահայկական, միջազգային եւ եկեղեցական կառույցներու հետ կապերու վարչութեան, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիի եւ այլ հոգեւոր կառույցներու հետ կապերի բաժնի առաջին կարգի մասնագէտ:

Հեղինակ է բազմաթիւ յօդածներու, որոնցմէ ոմանք լոյս տեսած են ժողովածոներու մէջ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ համաշխարհային նոր համակարգը, ՀՀ-ԻԻՀ քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մշակութային յարաբերութիւնները, Իրանի հայ համայնքը, դարաբաղեան հակամարտութիւնը, Հայոց Յեղասպանութեան հարցերը:

Եւա Մնացականեան

MnacakanyanEva@mail.ru

Ծնած է 1972ին, Աշտարակ: 1998ին պաշտպանած է թեկնածուական ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի անուան Գրականութեան Ինստիտուտին մէջ: Այս օրերուն կը պաշտպանէ իր դոկտորականը նոյն հաստատութենէն: 2004էն աւագ գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի անուան Գրականու-

թեան Ինստիտուտին մէջ, իսկ 2012էն կը պաշտօնավարէ Իսաչատուր Արովեանի անուան ՀՊՄՀին մէջ:

Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածներու, գիտաուսումնական փաթեթներու, գիրքերու, որոնցմէ վերջինն է *Բանավեճերը Գրական Հայերէնի Շուրջ եւ Յովհաննէս Թումանեանը* (2017): Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ գրականութեան հիմնահարցեր, գրականութեան տեսութեան խնդիրներ, ժամանակակից հայոց լեզուի եւ մանկական գրականութեան հիմնախնդիրներ, Յ. Թումանեանի կեանքի եւ ստեղծագործութեան տարեգրութիւնը:

Աստղիկ Մուշեղեան

a.musheghyan@gmail.com

Ծնած է 1959ին, Երեւան: 1982էն աւագ գիտաշխատող է Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ: 2005ին պաշտպանած է թեկնածուական: Հեղինակ է գիտական յօդուածներու, որոնք լոյս տեսած են ժողովածուներու մէջ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայ միջնադարեան երաժշտութեան պատմութեան ու տեսութեան հիմնախնդիրները, Արմաշի Դպրեվանքի երաժշտական ասանդոյթները, Գրիգոր Խլաթեցիի, Համբարձում Չերչեանի երաժշտական գործունէութիւնը, միջնադարեան հայկական տաղերը եւ վանական երաժշտագիտական ասանդները:

Զաւէն Մսրըլեան

Ծնած է 1938ին, Պէյրութ: 1963ին՝ մագիստրական աստիճանով պաշտպանած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Պատմութեան Բաժանմունքին մէջ: 2003ին ՀՀ ԳԱԱն իրեն շնորհած է Պատուոյ Դոկտորայի կոչում, իսկ 2014ին՝ ՀՀԳԱԱ Արտասահմանեան Անդամ է ընտրուած է: Մսրըլեան ասպարէզով կրթական մշակ է: 1960ին սկսած է որպէս ուսուցիչ ծառայել Պէյրութի Հայ Աւետ. Գէլեճէն ներս, ուր 1967-2017՝ վարած է տնօրէնի պաշտօն:

Հեղինակ է 100ի մօտ պատմական ուսումնասիրութիւններու, բազմաթիւ գիրքերու, որոնց վերջինն է *Armenian Participation in the Lebanese Legislative Elections 1934-2009* (Պէյրութ, 2014) հատորը: 2004էն ատենապետն է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ռիչըրտ եւ Թինա Քարոլան Հրատարակչական Հիմնադրամին:

Սոնա Ներսիսեան

sona.nersisyan2016@gmail.com

Ծնած է 1989ին, Մեծամօր: 2012ին պաշտպանած է մագիստրական աստիճան Խ. Արովեանի անուան Հայաստանի Պետական Մանկավարժական Համալսարանին մէջ: 2014էն կ'աշխատի իր թեկնածուական աստիճանին վրայ: 2012էն կրտսեր գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկի, Սփիւղքի Հետազոտութիւնների բաժնին:

Գիտաուսումնասիրական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ էթնօրն-կերաբանութիւնը, գաղթականութիւնը, սփիւռքը, ընկերային ցանցերու ուսումնասիրութիւնը:

Տաթևիկ Շախկույան

shakhkulyan@yahoo.com

Ծնած է 1980ին, Ալավերդի, Հայաստան: 2009ին պաշտպանած է թեկնա-ծուականը՝ ՀՀ ԳԱԱ Արուեստի Հիմնարկին մէջ: 2015էն Կոմիտասի Թան-գարան-Հիմնարկի Գիտական Բաժնի ղեկավարն է: 2009էն դասախօս է Կոմիտասի անուան Պետական երաժշտանոցի երաժշտութեան Տեսու-թեան Ամբիոնին մէջ: 2012էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Արուեստի Հիմնար-կին: 2016էն՝ «Կայթ» Հիմնադրամի համահիմնադիրն ու խմբավարը: 2015էն Աանդակաւ երաժշտութեան Միջազգային Խորհուրդի (ICTM) հա-յաստանեան ներկայացուցիչն է:

Խմբագրած, կազմած եւ թարգմանած է շարք մը գիրքեր, ունի երաժշտա-կան բազմաթիւ ուսումնասիրութիւններ, հեղինակ է մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Կոմիտասի Ստեղծագործութեան Վաղ Շրջանը* (2014) հա-տորն է: Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Կոմիտաս վարդապետի կեանքն ու ստեղծագործութիւնը, հայ ժողովրդա-կան երաժշտութիւն, հայ յօրինողական երաժշտութիւնը, Ի. դարու համաշ-խարհային երաժշտութիւնը, երաժշտութեան ներդաշնակութեան եւ բազ-մաձայնութեան տեսութիւնը:

Արսէն Շահինեան

a.shaginyan@spbu.ru

Ծնած է 1975ին, Էջմիածին: Ներկայիս կը բնակի Սանկտ-Պետերբուրգ: 2002ին, Ս. Պետերբուրգի Պետական Համալսարանի Արեւելագիտութեան Ֆակուլտետի մէջ պաշտպանած է թեկնածուականը: 2010ին, նոյն համա-լսարանին Պատմութեան Ֆակուլտետին մէջ հետեւած է յետթեկնածուա-կան դասընթացքներու: 2011էն կը պաշտօնավարէ իրրեւ փրոֆեսոր, Ս. Պե-տերբուրգի Պետական Համալսարանի Պատմութեան Ինստիտուտին մէջ: Հեղինակ է շարք մը մենագրութիւններու եւ ուսումնասիրութիւններու: Հրատարակած վերջին մենագրութիւնն է *Rannesrednevekovaja geografija Armenii i stran Juznogo Kavkaza* (Հայաստանի եւ Հարաւային Կովկասի եր-կիրներու վաղ միջնադարեան աշխարհագրութիւնը), Ս. Պետերբուրգ, "DMITRII BULANIN", 2014: Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրն է.- Մերձաւոր Արեւելքի եւ Հարաւային Կովկասի երկիրներու վաղ միջ-նադարեան պատմութիւն եւ աշխարհագրութիւն, Հայագիտութեան եւ Կով-կասագիտութեան պատմութիւնը Ս. Պետերբուրգի եւ Ռուսաստանի մէջ:

Նորա Պարութեան

nora.baroudjian@gmail.com

Ծնած է 1959ին, Պէրյոփ: Ներկայիս կը բնակի Ալֆորվիլ, Ֆրանսա: 1984ին աւարտած է ԵՊՀ Բանասիրական Բաժինը, իսկ 1990ին՝ INALCOէն ստա-

ցած է Diplôme d'Etudes Approfondies: Ներկայիս կ'աշխատի իր թեկնածուական աւարտաճառին վրայ: Եղած է խմբագրակազմի անդամ Պէյրոյի *Ջարթօնքին* (1984-86) եւ Փարիզի *Նոր Յառաջին* (2009-11): 1999էն հայերէնի եւ հայոց պատմութիւն կը դասաւանդէ Լը Ռենսի Դպրոցասէր Տիկնանց Վարժարանը: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ժԺ. դարու հայկական Ջարթօնքը:

Սօնա Պապիկեան

aleksanyan.bella@mail.ru

Ծնած է 1956ին, Կիրովական (այժմ՝ Վանաձոր): 1981ին աւարտած է ԵՊՀ Պատմութեան Բաժանմունքի ազգագրութեան բաժինը: Ներկայիս կը պաշտօնավարէ Սարդարապատի հերոսամարտի յուշահամալիրի Հայոց Ազգագրութեան եւ Ազատագրական Պայքարի Պատմութեան Ազգային Թանգարանի Նիւթական Մշակոյթ բաժինին մէջ:

Հեղինակ է ազգագրական բնոյթի ուսումնասիրական յօդաւածներու: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայոց տնտեսաձեւերը, ուտեստի եւ ծիսական համակարգերը, կենցաղը:

Վարդան Պետրոսեան

vz.petrosyan@ysu.am

Ծնած է 1966ին, Երեւան: 1995ին պաշտպանած է թեկնածուականը ՀՀ ԳԱԱ Լեզուի Ինստիտուտին մէջ: 1995էն դասախօս է ԵՊՀ Հայոց Լեզուի Ամբիոնին մէջ, 2013էն՝ ամբիոնի վարիչն է:

Հեղինակ է լեզուաբանական ուսումնասիրութիւններու: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ընդհանուր եւ համեմատական լեզուաբանութիւնը, կառուցուածքային լեզուաբանութիւնը, ընդհանուր հնչոյթաբանութիւնը, հայերէնի պատմական հնչոյթաբանութիւնը եւ ձեւաբանութիւնը, ստուգաբանութիւնը: Ներկայիս կը բնակի Գառնի:

Կարինէ Ռաֆայէլեան

karine.rafaelyan@mail.ru

Ծնած է 1964ին, Երեւան: 1985ին աւարտած է Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Պետական Մանկավարժական Ինստիտուտի (այժմ Համալսարան), Հայոց Լեզուի եւ Գրականութեան Բաժինը: 1994էն Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի մասնաճիւղ Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի վարիչն է: 2008էն իբրեւ մշակութային լրագրող կը պաշտօնավարէ «Իրատես» լրատուական ցանցին մէջ:

Կազմած, վերծանած, հրատարակութեան պատրաստած եւ խմբագրած է շարք մը երկեր: Ունի շարք մը գրականագիտական ուսումնասիրութիւններ: Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ գրականագիտութիւն, թանգարանագիտութիւն, մշակութաբանութիւն:

Ռուբեն Սահակյան

rubensahakyan58@gmail.com

Ծնած է 1958ին, Երեւան: 2013ին պաշտպանած է դոկտորականը ՀՀ ԳԱ Պատմութեան Ինստիտուտին մէջ:

Հրատարակութեան պատրաստած եւ խմբագրած է բազմաթիւ ուսումնասիրական ձեռագրեր, հեղինակ է թարգմանութիւններու, բազմաթիւ գիտական յօդածներու, մենագրութիւններու, որոնց վերջինը *Արեւմտեան Հայաստանի Ռազմաքաղաքական եւ Վարչարարական Իրավիճակը (1914 թ. Յուլիս - 1917 թ. Փետրուար)* (Երեւան, 2015) հատորն է: Գիտական հետաքրքրութիւններու ծիրն է արեւմտահայութեան ցեղասպանութիւնը եւ ինքնապաշտպանական կոիւնները, Ա-ԴՕՆ, Արցախահայութիւնը, Վանի Ա. Աշխարհամարտի տարիները, հայոց ոստիկանութեան պատմութիւնը:

Նազենիկ Սարգսեան

nazeniks@gmail.com

Ծնած է 1954ին, Երեւան: 1992ին պաշտպանած է դոկտորականը Մոսկուայի Համամիութենական Գիտահետազոտական Արուեստագիտական Հիմնարկին մէջ, իսկ 2017ին ստացած է յետդոկտորական գիտաստիճան ՀՀ ԳԱԱ Արուեստի Հիմնարկի Արուեստագիտութեան Մասնագիտական Խորհուրդէն: 1984էն իվեր կը գործէ ՀՀ ԳԱԱ Արուեստի Հիմնարկին մէջ: 1992-97, 2002-05՝ գործակցած է Մոսկուայի Դիմակաբուժման Հիմնարկի (հոգեբուժական կեդրոն) ղեկավար հոգեբուժ Գագիկ Նազլոյեանի հետ, աշխատելով որպէս պարային, հոգեբուժական մեթոտներու մասնագէտ: Համահեղինակ է *Хорошограф Последней Трети XX Века* (Ի. դարի վերջին երրորդի պարագրումը, Երեւան, 2011) հատորին: Գիտաուսումնական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգէկէ մասնագիտական պարարութեան, ժԹ. Բ. դարակէս-Ի. դարասկիզբի հայ բեմապարը, յորինողները, կատարողները, արեւմտեան տարրերու առկայութիւնը այնտեղ, երաժշտական թատրոն, պարաերաժշտական հոգեբուժութիւն, հայ միջնադարեան պատմութեան եւ գրականութեան, Հայոց Ցեղասպանութեան ընկալումն ու մեկնաբանութիւնը հայ բեմարուեստին մէջ եւ:

Վահէ Սարգսեան

javakhk1913@gmail.com

Ծնած է 1983ին, Ախալքալաքի Ղադօ Գիւղը: 2010ին պաշտպանած է թեկնածուականը ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտին մէջ:

2017ին հիմնած է «Խելացիների Տուն» ուսումնական կեդրոնը՝ կրթական ծառայութիւններ մատուցանելու համար: 2017էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Հայ Գաղթօճախներու եւ Ափիւղքի Պատմութեան բաժնին մէջ: «Զաւախքին Աջակցութիւն» հիմնադրամի գործադիր տնօրէնի տեղակալն է եւ «Միտք» Վերլուծական Կեդրոնի գործադիր տնօրէնը:

Հեղինակ է Զաւախքի անցեալին ու ներկային նուիրուած բազմաթիւ յօդուածներու որոնք լոյս տեսած են ժողովածուներու մէջ: Կազմած եւ խմբագր-

ած է շարք մը գիրքեր: Հեղինակ է միջանի մենագրություններու, որոնց վերջինը՝ *Ջալախեցի. Կեանքն ու Սրեղծագործական Ուղին (ծննդեան 140ամեակի առթիւ)*, (2014) հատորն է:

Վեր. Յարութիւն Սեփմեան

hselimian@gmail.com

Ծնած է 1963ին, Հալէպ: 2001ին մագիստրականով վկայուած է McCormick Theological Seminaryէն: Եղած է հովիւր Քեսապի Հայ Աւետ. Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ: 1992ին ստանձնած է Հալէպի Հայ Աւետ. Բեթէլ Եկեղեցիին հովուութիւնը. վարած վարչական պատասխանատու պաշտօններ՝ Հալէպի եւ Սուրիոյ հայ եւ ամետարանական միջավայրին մէջ: 2004էն համայնքապետն է Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքին: Գիտաուսումնական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ քրիստոնէական աստուածաբանութիւնը, հայ ամետարանականութիւնը, Սփիւռքի պատմութիւնը, ինքնութեան հարցերը:

Անդրանիկ Տազէտեան

adakessian@haigazian.edu.lb

Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը Ուէյլզի Համալսարանին մէջ: Պատասխանատու քարտուղարն է Հայկազեան Հայագիտական Հանդէսին (1993), անդամ է Հայագիտական Հարցեր Հանդէսի խմբագրակազմին (2014): 2011էն տնօրէնն է Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին: Կազմած, խմբագրած եւ իրատարական է տասնեակ մը գիրքեր, ունի մենագրութիւններ, որոնց վերջինը *Լիբանանի Հայօճախը, Գիրք Ա., Համարկումին Խաչուղիները (1920-2005)* (Պէյրութ, 2015) հատորն է:

Գիտական հետաքրքրութեանց ծիրը կ'ընդգրկէ ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, սփիւռքի մշակոյթի եւ պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեան հարցերը:

Լուսինէ Տանաջեան

Lusine.tanajyan@gmail.com

Ծնած է 1990ին, Նոր Խարբերդ: 2013ին պաշտպանած է մագիստրական ասարտաճառ՝ Խ. Աթուրեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի Կրթութեան, Հոգեբանութեան եւ Ընկերաբանութեան Բաժանմունքին մէջ: 2014էն կ'աշխատի իր թեկնածուականին վրայ: 2011էն կրտսեր գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկի, Սփիւռքի Հետազօտութիւններու բաժնին մէջ: Հեղինակ է շարք մը ուսումնասիրական յօդուածներու որոնք արդիւնքն են դաշտային հետազօտութիւններու: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ հայկական սփիւռքը, գաղթականութիւնը, սփիւռքի ընկերային փոփոխութիւնները:

Ա. Գ. Քալաշեան**av_kalashyan@mail.ru**

Ծնած է 1953ին, Մարալիկ: 1988ին պաշտպանած է թեկնածուական ասարտաճառը Թբիլիսիի Պետական Համալսարանին մէջ, փիլիսոփայութեան մասնագիտութեամբ: 1990էն դասախօս է ԵՊՀի մէջ, 2013-17՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանին մէջ: Հեղինակ է գիտական յօդուածներու եւ մենագրութիւններու:

Փերէր Փալ Քրանից**kranitz_peti@hotmail.com**

Ծնած է Պուտափեշթ, 1990ին, ուր ներկայիս կը բնակի: 2017ին պաշտպանած է դոկտորականը, պատմութեան մասնագիտութեամբ՝ Pázmány Péter Catholic Universityէն: Ներկայիս արտասահմանեան լրատուութեան բաժնի խմբագիրն է Media Services and Support Trust Fundի: Հեղինակ է ուսումնասիրութիւններու եւ գիրքերու, որոնց վերջինն է՝ Hungary in Georgia, 2017ին: Գիտաուսումնական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հունգար ներկայութիւնը Կովկասի մէջ, Հայկական Հարցը միջազգային ատեաններու մէջ, Հայաստանի Ա. Հանրապետութեան տեղը միջազգային ատեաններուն մէջ, ժողովրդագրական խնդիրները, Հայոց Յեղասպանութիւնը 1920-40 շրջանի հունգար քաղաքական տրամախօսութեան մէջ, վերապրողներ, գաղթականներ եւ ապաստան փնտռողներ, Հայոց Յեղասպանութեան գաղթականներ՝ Հունգարիոյ մէջ:

Վլատիմիր Օսիփով**vosipov@yahoo.com**

Ծնած է 1956ին, Կոնոտոպ, Ուկրաինա: 1984ին պաշտպանած է թեկնածուականը ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայութեան, Սոցիոլոգիայի եւ Իրաւունքի Ինստիտուտին մէջ: 1997-98՝ Ֆուլպրայթ կրթաթոշակով ուսանած է Boston Universityի մէջ: 1989էն աւագ գիտաշխատող ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայութեան, Սոցիոլոգիայի եւ Իրաւունքի Ինստիտուտին մէջ:

Հեղինակ է շարք մը մենագրութիւններու, բազմաթիւ յօդուածներու, համահեղինակ՝ գիրքերու: Հրատարակած վերջին մենագրութիւնն է *Employment of People with Disabilities in Armenia: Needs and Barriers. Report on Qualitative Study Findings*. Yerevan: Save the Children & IOM, 2013: Գիտաուսումնասիրական հետաքրքրութեան ոլորտներն են.- քաղաքացիական հասարակութիւնը, արմատականութիւնը, գաղթը, ժողովրդավարացումը, սեռերու հաւասարութիւնը: Ներկայիս կը բնակի Երեւան: